*Հավելված N 2*
*2024 թվականի հունվարի 28-ին կնքված*
***«1032-11003/24-ԾՑ»** պայմանագրի*

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (Գյումրի) |
| Դրամաշնորհի N | ***«1032-11003/24-ԾՑ»*** |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2024 - 31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.03.2024-30.06.2024 |
| Ներկայացման օր | 10.07.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| **Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝**<br>• Շահառուների կարիքի վերագնահատում, անհատական սոցիալական ծրագրերում համապատասխան գրանցումների կատարում,<br>• Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում,<br>• Օրական մեկանգամյա սննդի տրամադրում՝ (շաբաթական 5 օր),<br>• Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում, ներառյալ դեղորայք՝ ըստ կարիքի<br>• Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի, վարսահարդարման, լվացքի ծառայությունների մատուցում, |

- Շահառուների նախասիրությունների բացահայտում, խմբակների ձևավորում, զբաղվածության և ժամանցի կազմակերպում,
- Միջոցառումների կազմակերպում /էքսկուրսիաներ, տոների և հիշարժան օրերի նշում/:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Կատարվել է շահառուների կարիքների վերագնահատում, և անհատական սոցիալական ծրագրերում համապատասխան գրանցումների կատարում:
- Շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն՝ սոցիալական խնդիրները լուծելու նպատակով:
- Պատրաստվել են 7 շահառուի նպաստի և աջակցության փաստաթղթերը և ուղղորդվել են ՄՄԾ:
- Շահառուներին տրամադրվել է սոցիալ-իրավական և սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, որի շնորհիվ լուծվել են շահառուների ընտանեկան կոնֆլիկտները:
- Շահառուները ուղեկցվել են պոլիկլինիկա, բանկ և ՄՄԾ:
- Կատարվել են զանգեր և 3 հասցեական տունայց՝ բացակա շահառուների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:
- Շահառուներին տրամադրվել է ամենօրյա սնունդ՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Շահառուներին տրամադրվել է բուժքույրական խնամք, խորհրդատվություն և աջակցություն՝ ներառյալ ըստ կարիքի դեղորայք:
- Անցկացվել են թերապևտիկ վարժանքներ հատուկ մարզասարքերով:
- Ապահովվել է տարեցների անձնական հիգիենան ու խնամքը: Տրամադրվել է բաղնիք հաճախելու 148 տոմս: Շահառուները օգտվել են լվացքատան ծառայությունից: Լվացվել և արդուկվել են 26 տարեցի անկողնային պարագաները:
- Ապահովվել է շահառուների զբաղվածությունը խմբակների միջոցով՝
- «Մտքի թռիչք» և «Ստեղծագործող ձեռքեր» խմբակները մաքրամեից պատրաստել են հետևյալ իրերը՝ թանոց (65 հատ), գլխազարդ (8 հատ), գոտի (5 հատ), վզնոց (30 հատ), կախազարդ (45 հատ), սեղանի համար նախատեսված սփռոց (3 հատ), խոհանոցային կախիչ (1 հատ), պայուսակ (1 հատ), օղ (5 զույգ): Ցուցադրվել են նաև տեսանյութեր՝ տեխնոլոգիաների ուսումնասիրման նպատակով:

- «Հրաշագործները» խմբակը շարունակել է իր ակտիվ աշխատանքները 15 տարեցի հետ: Շահառուներին ներկայացվել են նոր զարդանախշեր, տեսական և գործնական գիտելիքներ: Պատրաստվել են մագնիսներ (60 հատ), կրծքազարդեր (40 հատ), բաժակի տակդիրներ (20 հատ), կախազարդեր (40հատ):
- «Ֆիզ-արտ» խմբակի շահառուներն ունեն հենաշարժողական խնդիրներ: Խմբակի գործունեության ընթացքում կատարվել են հետևյալ գործողությունները՝ թերապիաների միջոցով /արտթերապիա, ռիթմոթերապիա, դրամաթերապիա, իզոթերապիա, ֆիզիոթերապիա, պարաթերապիա/: Եռամսյակի ընթացքում շաբաթական 5 օր, 16 շահառուի հետ կատարվել են ֆիզիոթերապևտիկ վարժություններ (ֆիզիոթերապիան թույլ է տալիս նվազագույնի հասցնել հնարավոր կողմնակի բարդությունները, բարձրացնում է մարմնի պաշտպանությունը, ամրապնդում է իմունային համակարգը և ակտիվացնում հյուսվածքների ու օրգանների կենսաքիմիական գործընթացները, դանդաղեցնում է ծերացման գործընթացը), որի շնորհիվ փոխվել է շահառուների կեցվածքը, կարգավորվել է իմունային համակարգը: Անցկացվել է օկուպացիոն թերապիա շտկիչ վարժանքների միջոցով: Նրանք, ովքեր տեղաշարժվում էին ձեռնափայտով, սկսել են մարզանքների ժամանակ վարժությունները կատարել առանց ձեռնափայտ կիրառելու: Արտթերապիայի (թերապիայի նպատակն է անձի ներդաշնակության ապահովումը, ինքնաբացահայտումը և ինքնարտահայտումը): Արտթերապիայի ճյուղերից է մանդալաթերապիան: Այն շրջաններից կազմված կամ շրջանում պատկերված նկար է, որը գունազարդելով արտահայտվում են հույզերը՝ գույների և ձևերի միջոցով և ստեղծվում է դրական հուզական ֆոն: Եռամսյակի ընթացքում կատարել ենք 13 անգամ 16 շահառուի հետ: Իզոթերապիա (Այն իրենից ներկայացնում է նկարչության միջոցով թերապիա, որը ուղղված է հուզա-կամային ոլորտի շտկմանը, ինքնաճանաչմանը և անձնային աճին): Կատարել ենք 9 անգամ՝ 13 շահառուի հետ: Ծեփագործություն՝ պլաստիլինի միջոցով պատկերների ստեղծում, որի շնորհիվ զարգանում է մանր մոտորիկան: Եռամսյակի ընթացքում կատարել ենք 5 անգամ՝ 14 շահառուի հետ: Դրամաթերապիա՝ իրավիճակային կարճատև փոքրիկ բեմականացումների իրականացում՝ դերախաղերի միջոցով: Կատարվել է 3 անգամ՝ 15 շահառուի հետ: Ռիթմոթերապիայի շնորհիվ շահառուները կարողանում են երաժշտության ռիթմը համապատասխանեցնել մարմնի ռիթմին՝ շարժումների շնորհիվ: Կատարել ենք 14 անգամ՝ 16 շահառուի հետ:
- «Ծաղիքագործության» և «Կարպետագործության» խմբակի կամավոր-խմբավարը շարունակել է աշխատել 6 հոգանոց խմբի հետ, որոնք այս ժամանակահատվածում կիսապատրաստ թաղիքե իրերը բերել են ավարտուն տեսքի: Ծանոթացել են կարպետ պատրաստելու տեխնոլոգիային և սկսել են հենքելու գործընթացը:
- Երգի խմբակի կամավոր-խմբավարը շարունակել է աշխատել 8 հոգանոց խմբի հետ: Սովորել և ներկայացրել են 7 երգ:

- Շահառուների ամենօրյա ժամանցն ապահովելու համար կատարվել են հետևյալ գործողությունները՝
- Անցկացվել են ինտելեկտուալ խաղեր և հոգեբանական թեստեր:
- Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված «Սուրբ Զատիկ» տոնին, նշվել են հիշարժան օրերը՝ «Մայրության և գեղեցկության օր», «Հուշարձանների միջազգային օր», «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր», «Պարի համաշխարհային օր», «Ջազի միջազգային օր», «Աշխատավորների միջազգային օր», «Հաղթանակի օր», «Ընտանիքի միջազգային օր», «ՀՀ առաջին հանրապետության հռչակման օր», «Ծխախոտի դեմ պայքարի միջազգային օր», «Երեխաների պաշտպանության միջազգային օր», «Շրջակա միջավայրի համաշխարհային օր»: Անցկացվել են միջոցառումներ նվիրված՝ Լեոնարդո դա Վինչիի 572-ամյակին, Չառլի Չապլինի 135-ամյակին, Հովհաննես Շիրազի 110-ամյակին, Գրիգոր Նարեկացու 1073-ամյակին,Գուրգեն Ջանիբեկյանի 127-ամյակին, Շառլ Ազնավուրի 100-ամյակին, Ալեքսանդր Պուշկինի 225-ամյակին, Սայաթ-Նովայի 312-ամյակին: Միջոցառումների ավարտին ցուցադրվել են փաստա-վավերագրական ֆիլմեր:
- 15 շահառու շարունակել են պարբերաբար այցելել «Ալցհայմերի խնամք Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից «Առողջ ուղեղի հայկական ծրագրի» շրջանակներում Գյումրու «Լոֆթ» ակումբում կազմակերպված «Հիշողության սրճարան» ժամանցային միջոցառումներին:
- Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ ՊՈԱԿ-ի սաները պարբերաբար իրենց երաժշտական համարներով ուրախացրել են շահառուներին:

*Վերոնշյալ գործողությունների արդյունքում շահառուները սոցիալականացված են, մեկուսացված չեն, ներգրավված են տարբեր խմբակների, սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ: Նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:*
*Բարելավված ներառումը լայն հասարակության մեջ ակնառու է: Նրանք իրենց համարում են հասարակության լիիրավ անդամներ:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

- Ապրիլի 7- «Բարության խորհրդանիշ» համայնքային զարգացման հասարակական կազմակերպության այցը Հայկական Կարիտասի Գյումրու «Տարեցների ցերեկային խնամքի կենտրոն»: ՀԿ նախագահ Հովսեփ Մեսրոպյանը իր սաների հետ կազմակերպել էին միջոցառում՝ մայրության և գեղեցկության օրվան նվիրված: https://www.facebook.com/story.php?story_fbid=822171849947084&id=100064628296289&mibextid=WC7FNe&rdid=bUNG4xKhHhH0VeP0

- Ապրիլի 22- Առողջ ապրելակերպ տարեցների առողջությունն ու ֆիզիկական ակտիվությունը բարելավելու համար:
https://www.facebook.com/story.php?story_fbid=831779862319616&id=100064628296289&mibextid=WC7FNe&rdid=HICM6feguDFnIuDP
Մայիսի 10 - Մեծ Հայրենական պատերազմի հաղթանակի 79 ամյակի առթիվ Հայկական Կարիտասի Գյումրու Տարեցների ցերեկային հոգածության կենտրոնում, կամավորների ու աշխատակիցների ջանքերով, անցկացվեց տոնական միջոցառում, որին իրենց գեղեցիկ համարով հանդես եկան նաև Կարա Մուրզայի անվան երաժշտական քոլեջի սաները:
https://www.facebook.com/story.php?story_fbid=843637074467228&id=100064628296289&mibextid=WC7FNe&rdid=ZFLBR7RFI2kiSRHK
- Հունիսի 1- Տարեցների ցերեկային հոգածության կենտրոնի շահառուները այցելել էին «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն շնորհավորելու երեխաների պաշտպանության միջազգային օրը:
https://www.facebook.com/photo/?fbid=858411156323153&set=pcb.858412259656376
https://www.facebook.com/share/v/48GDoHHXRY93SL2d/?mibextid=WC7FNe
- Հունիսի 5-ին նշվող Շրջակա միջավայրի համաշխարհային օրը ՄԱԿ-ի համար հիմնական միջոցներից է շրջակա միջավայրի խնդիրներին հանրության ուշադրությունը գրավելու, ինչպես նաև հարցի հանդեպ քաղաքական հետաքրքրություն արթնացնելու համար: Տարեցների Ցերեկային կենտրոնում շաբաթօրյակ էր՝ շահառուների, աշխատակիցների ու կամավորների մասնակցությամբ:
https://www.facebook.com/share/p/12rYz5f9URCgM3kM/?mibextid=WC7FNe
- Հունիսի 14- «Հայկական Կարիտաս»-ի «Տարեցների ցերեկային կենտրոն»-ի բակում կազմակերպվել էր միջոցառում նվիրված հայ բանաստեղծ, աշուղ Սայաթ-Նովայի 312-ամյակին: Տարեցները կատարեցին Սայաթ-Նովայի ստեղծագործություններից: Ներկայացվեցին հետաքրքիր փաստեր և դրվագներ նրա կյանքից:
https://www.facebook.com/share/v/VdHhHjmfT4KmNvcS/?mibextid=WC7FNe

Ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են: Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն և նկարներ:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է իրականացնել՝

- Ամենօրյա ցերեկային խնամք (շաբաթական 5 օր)
- Սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրում
- Կազմակերպվելու է տարբեր ժամանցային, ինտելեկտուալ խաղեր և միջոցառումներ:
- Կանոնավոր բժշկական ստուգումներ և հնարավոր դեղորայքով ապահովում, զանազան հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ զրույցներ, առողջ ապրելակերպին նպաստող միջոցառումներ:
- Մասնագիտական, հիշատակի և այլ տոների նշում:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- Տրամադրվել են նվերներ մայրության և գեղեցկության օրվա կապակցությամբ:
- Անհատ բարերարների կողմից տարեցներին տրամադրվել են հագուստ 4 անգամ:
- Առավել կարիքավոր շահառուները շարունակում են անվճար օգտվել քաղաքային տրանսպորտից՝ հատուկ քարտերի միջոցով, որը տրամադրել է Գյումրու համայնքապետարանը:
- Հայկական Կարիտասի այլ ծրագրի կողմից շահառուներին տրամադրվել է 30 ձու:

**Ծահառուներ****

| № | Անուն, ազգանուն | Հասցե | Սոց.քարտ | Հեռախոս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հարությունյան Սոֆիկ | Կատովսկու փող, տուն 6 | 8008480033 | 094753105 | |
| 2. | Գյոզալյան Սամվել | Պուշկինի փող., 3-րդ նրբ, տուն 12/1 | 4010530235 | 094242669 | |
| 3. | Կարապետյան Թամարա | Անտառավան 5 թաղ. շ.21ա բն14 | 6405500276 | 098165284 | |
| 4. | Սողոյան Գոհարիկ | 26 Կոմիսարների փող., 82/2 | 8005510012 | 098596430 | |
| 5. | Մարտիրոսյան Աիդա | Անտառավան 3թաղ 227/154 | 6301420055 | 077381942 | |
| 6. | Առաքելյան Արբուհի | խ.Հայրիկ, Սիմաֆոր շ.20, բն.5 (Արեվելյան շրջանցող ճանապ. 5) | 5507500312 | 098463453 | |
| 7. | Մուրադյան Ռոզա | Երևանյան խճ. շ. 97ա, բն.5 | 5302510235 | 093152426 | |
| 8. | Բեյբության Տիրուն | Տ.Ճարտարապետ 7/5 շ., բն.13 | 6811400013 | 094635731 | |
| 9. | Ամիրյան Գրիգոր | Մուշ 2 թաղ., 2 դ շ., բն. 49 | 1309540012 | 094195490 | |
| 10. | Հովհաննիսյան Գյուլնարա | Ա.Խաչատրյան փող., շ.2, բն.51 | 6001580746 | 077195810 | |
| 11. | Գալստյան Ռիմա | Կամոյի փող., 50ա շենք, բն. 29 | 5204420193 | 077224878; 56214 | |
| 12. | Դեմիրճյան Արաքսի | Թամանյան փող., տուն 4 | 7502350012 | 095786796 | |
| 13. | Դավթյան Սվետլանա | Մուշ 2 թաղ, 9 փողոց, շ.7/1, բն. 20 | 6005420024 | 094373848 | |
| 14. | Մինասյան Աննա | Մ.Ավետիսյան փող., շ. 21., բն. 52 | 5305500036 | 093944231 | |
| 15. | Մովսիսյան Լենա | Հնոցավան 3 շարք, տուն 25 | 7203500330 | 094840832 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. | Աթոյան Սուսաննա | Մովսես Խորենացի 46/1շ. բն.34 | 8110520022 | 093438916 | |
| 17. | Սարգսյան Սեդա | Մուշ 2 թաղ., շ.4/24 բն. 22 | 5107411177 | 094612251 | |
| 18. | Եղիազարյան Շողիկ | Մանուշյան փող., շ.1ա., բն. 17 | 7611410067 | 093402476 | |
| 19. | Մկրտչյան Մնացական | Մուշ 2 թաղ. Հալաբյան 3/1շ. բն 47 | 2810350027 | 093690136 | |
| 20. | Էլոյան Տատյանա | Պ.Սևակի փող., 15ա շ.,բն. 23 | 5914510015 | 093505185 | |
| 21. | Գրիգորյան Քնարիկ | Անտառավան 5 թաղ., 232/314 | 7512400257 | 094421868 | |
| 22. | Կարապետյան Մարգարիտ | Ջափարիձե փող, տուն 28 | 6305530017 | 5-04-38; 094085474 | |
| 23. | Կորմակովա Տատյանա | Հ.Սարգսյան փող., 4 անց, տուն 3 | 5812410275 | 098125729 | |
| 24. | Գևորգյան Համիկ | Կամոյի փող., 75ա շենք, բն. 38 | 6710460076 | 077982912 044474911 | |
| 25. | Գրիգորյան Վարդգես | Կամոյի փող. շ.50ա, բն.51 | 4108380037 | 099057451 | |
| 26. | Առաքելյան Օֆելյա | Կամոյի փող., շենք 71ա, բն. 41 | 6105480016 | 094026710 | |
| 27. | Ասատրյան Սվետլանա | Տեքստիլագործների փող., 12 տուն | 6804560396 | 098372196 | |
| 28. | Ղարիբյան Սիլվա | Անի թաղ. 13 փող. շ. 9, բն 7 | 7603540011 | 077246374 | |
| 29. | Արմուտյան Օժեն | Ղուկասյան փող., տուն 107 | 6807520026 | 077201014 | |
| 30. | Մինասյան Հրանուշ | Խնկոյան փող., տուն 27 | 6803390394 | 098630309; 094240426 | |
| 31. | Դանիելյան Բերսաբ | 224/434 Սավոյան փողոց | 5103440075 | 077908540 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 32. | Ներսիսյան Բուրիկ | Կամոյի փող., 42ա շ., բն. 11 | 5710480037 | 57332; 093325687 | |
| 33. | Խլղաթյան Մարիյա | Ղուկասյան փող., 15 շարք., 22/1Ա | 8005520313 | 091016575 | |
| 34. | Պետրոսյան Անահիտ | Շիրակացի փակուղի 1-ին, տուն 4 | 8008560134 | 094507572 | |
| 35. | Եղիազարյան Նունուշ | Ավտոյակարան 104/511 | 6605430077 | 094318943 | |
| 36. | Խականյան Ջուլիետա | Հալաբյան շ.9/1, բն 2 | 5108370105 | 077602064; 077691947 | |
| 37. | Գևորգյան Սիլվա | Ջիվանու փող., 98/21 | 7111470206 | 096979866 | |
| 38. | Աբգարյան Հերիքնազ | Կամոյի 40Ա շ.,բն. 58 | 5802420235 | 093149925 | |
| 39. | Վինճիչենկո Վարդանուշ | Սահմանապահների փող.,տուն41 | 6702430094 | 094170243 | |
| 40. | Մովսիսյան Ասյա | Մուշ-2, շ.4/31, բն. 38 | 7409410140 | 094465570 | |
| 41. | Մուրադյան Մարիա | Ջիվանու փող., տուն 114 | 6512410041 | 077505792 | |
| 42. | Գևորգյան Քնարիկ | Ջիվանու փող, տուն 123 | 7608390352 | 077469964 | |
| 43. | Ալեքսանյան Սվետլանա | Չերազի թող., շ.19, բն. 29 | 7405420192 | 098362688 | |
| 44. | Հովսեփյան Հրաչյա | Ներսես Շնորհալու փող., շ.25, բն.25,26,27 | 1107572614 | 098122120 | |
| 45. | Ամիրխանյան Սանդուխտ | Ս. Մատնիշյան փող.,տուն 343 | 5112460466 | 093657848 | Դուրս է եկել հիվանդության պատճառով 12.04.2024թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 46. | Պողոսյան Ալմաստ | Հալաբյան փող., շ. 10/1, բն. 30 | 7607510222 | 077619025 | Տեղափոխվել է ՌԴ 15.04.2024 թ. |
| 47. | Համբարյան Հենրիկ | Շահինյան 4ա շ., բն. 6 | 1603350101 | 077151983; 094741050 որդի Վարդան | Դուրս է եկել հիվանդության պատճառով 31.05.2024 թ. |

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան<br><br>---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն<br>Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան<br><br>---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ցերեկային կենտրոնում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 47/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 39 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 0 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 0 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 47 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 47 |
| 3. | կարիքի գնահատում | 47 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում | 47 |
| 5. | Խմբակների կազմակերպում | 47 |
| 5.1 | Ծաղիքագործություն | 6 |
| 5.2 | Մտքի թռիչք, Ստեղծագործող ձեռքեր | 16 |
| 5.3 | Հրաշագործները | 15 |
| 5.4 | Ֆիզ-արտ | 16 |
| 5.5 | Երգ | 8 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում | 47 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 40 |
| 7. | Այլ ծառայություն<br>• բուժքույրի ծառայություններ | 47 |

| | | |
|---|---|---|
| | • լվացքատան ծառայություններ<br>• լոգանքի ծառայություններ | 24<br>148 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան ____________________
«10» 07. 2024 թ.

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ա. Մուրադյան<br><br>____________________<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն<br>Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան<br><br>____________________<br>(ստորագրություն) |

Քնարիկ Գրիգորյան

Քնարիկ Գրիգորյանը ծնվել է 1940 թվականի դեկտեմբերի 25-ին Տավուշի մարզի Իջևանի շրջանի գյուղ Ենոքավանում:

Երեք տարեկանում հայտնվել է Երևանի մանկատանը, այնուհետև տեղափոխվել է Ստեփանավանի 1-ին, Կոտեվանի 2-րդ մանկատուն և վերջապես Փամբակի մանկատուն: 1956-թվականին տեղափոխվել է Գյումրի: Պրակտիկան անցկացրել է Տեքստիլ կոմբինատում: Դպրոցն ավարտելուց հետո անցել է աշխատանքի, որպես բանվորուհի: Աշխատանքին զուգահեռ սովորել է տեխնիկումում՝ տեքստիլ արդյունաբերություն մասնագիտությամբ: Տեխնիկումն ավարտելուց հետո աշխատել է որպես հրահանգիչ: 1960 թվականի ամուսնացել է: Ամուսինը եղել է պարող, ամուսնությունից հետո ամուսնու խորհրդով հաճախել են պարի: Մասնակցել են տարբեր միջազգային մրցույթների, շրջագայել են մի քանի երկրներ՝ Եգիպտոս, Ֆինլանդիա, ԱՄՆ: Ստացել են բազմաթիվ մրցանակներ:

1962 թվականին ունեցել է առաջնեկին, որը մահացել է երկրաշարժին, 1964 թվականին ծնվել է երկրորդ երեխան, իսկ 1975 թվականին ունեցել է ևս մեկ աղջիկ: 1990 թվականին մահացել է ամուսինը:

Երկու աղջիկները ամուսնացած են և ապրում են Ռուսաստանում: Քնարիկն ունի 4 թոռ, 7 ծոռ:

Ապրում է կոմունալ-կենցաղային պայմաններից զուրկ տնակում, չունի սանհանգույց՝ ջուրը դրսում է: Տնակը տաքացնում է փայտե վառարանի օգնությամբ:

«Պարը ինձ համար այս կյանքում լիարժեք զգալու գրավականն է: Վերջին տարիների ընթացքում առօրյա հոգսերի պատճառով պարը իմ կյանքից դուրս էր եկել: «Տարեցների ցերեկային հոգածության կենտրոն» հաճախելուց հետո ես գտա

իմ մեջ կորցրած պարուհուն: Բոլոր միջոցառումներին ակտիվ մասնակցում եմ և վերհիշում իմ պարային հմտությունները: Այստեղ ես ինձ լիարժեք եմ զգում՝ իմ կյանքը պատվել է նոր գույներով»,-ժպիտի արանքից արցունքները թաքցնելով ասում է Քնարիկը:

Տարեցների ցերեկային կենտրոնի շահառու է 08.02.2024թ-ից: